

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

ԱՍՏՈՒԱԾ ՎԵՐՋԵՐՆԻՍ ԲԱՐԻ ԸՆԷ.

Տաճկաց սովորութիւններուն տեղեկութիւն ունեցողները գիտեն որ երբ այլահաւատ մը բարեւ տայ Տաճկին ու «Բարի լոյս կամ Բարի իրիկուն» ըսէ — (սասանընդ խայր օյսուն, ազաւընը խայր օյսուն, վագրընը խայր օյսուն), — տաճիկը պատասխան կուտայ թէ «Վերջդ բարի լինի» (սզըպէրին խայր օյսուն). ըսել կուզէ թէ գոնէ կեանքիդ վերջը մահմէտական դառնաս. եւ այս պատճառաւ սովորաբար տաճիկը տաճկին այս բարեմաղթութիւնը չընէր, համարելով թէ մահմէտականին վերջը բարի լինելիքը յայտնի բան է:

Կարծիք կայ թէ մեր ազգին մէջ այս տաճկական բարեմաղթութեան թարգմանութիւնն է այն սովորական դարձած խօսքը, որով կըսուի, «Աստուած վերջերնիս բարի ընէ». բայց ասոր միտքը բոլորովին տարբեր է, գործածութիւնն ալ ուրիշ:

Երբ կըսէ Հայը Հայուն թէ «Աստուած վերջերնիս բարի ընէ»: — Երբոր ազգային կամ հասարակաց անցեալ խեղճութիւնները մոռնալով, ներկայ խեղճութիւններուն վրայ կ'մտածէ, կշուարի, եւ ապագայէն յուսահատելու պէս կ'լինի, այն ատեն կըսէ, «Աստուած վերջերնիս բարի ընէ»:

Տարակոյս չկայ որ եթէ այս խօսքը քրիստոնէական բարեպաշտութեամբ ըսուի հաւատով եւ յուսով, գովելի բարեմաղթութիւն ու բաւական միջոցութիւն է. ասոր վրայ երկարօրէն խօսելու միտք չունիմք: Բայց որովհետեւ շատ անգամ այնպիսի պարագաներու մէջ ու այն սրտով կըսուի այս խօսքը որ ըսողը յայտնի կ'ընէ թէ առաջիկայ հասարակաց գործերուն կամ գիպուածներուն վրայ ինչ աչքով կնայի, տեսնեմք

թէ սովորաբար այս խօսքը ըսողները որո՞նք են եւ ինչ մտքով կըսեն:

Երկու, երեք, չորս հայ մէկտեղ որ գան ժողովուն, եթէ խօսքը առուտուրի վրայ բացուի, ծայրը շատ անգամ ասոր կերթայ թէ առուտուր չկայ, առուտուրները դադրած են, ֆեսուսութիւն է, թանկութիւն է, փող չկայ, ծախս չկայ, հացը թանկ, միսը թանկ, բամպակը թանկ, քթանը թանկ, խանութի՝ տան վարձը (ֆիրան) ծանր, հաւատարմութիւն չկայ, փոխ ստակ տուող չկայ, առած փողը վճարել չկայ եւ այլն:

— Այս ֆեսուսութեան ծայրը ուր պիտի երթայ:

— Հաւատա որ չեմ գիտեր, «Աստուած վերջերնիս բարի ընէ»:

Խօսքը ուրիշ բանի վրայ կ'գարձընեն.

«Նոր խապար լսեցիք: Այս եւ այն ազաները խահուէն մէկմէկու հետ խօսք խօսքի եկեր են. քանի գնացեր՝ բանը տաքցեր է, մեծ կռիւ մը ըրեր են, մէկը մէկալին վրայ գիր տուեր է:

— Այնպէս է նէ բանը պիտի մեծնայ՝ չըսես:

— Դարձեալ ազգին մէջ խռովութիւնը պիտի շատնայ:

— Ո՞ր գիտէ որչափ մարդու գլուխ պիտի ցաւի:

— Ձեմ գիտեր՝ այս մեր ազգին իրարու միս ուտելուն ծայրը ուր պիտի երթայ . . .

— Իրաւ որ չեմ գիտեր. Աստուած վերջերնիս բարի ընէ:

Խօսքը կ'առնայ ուրիշ բանի վրայ:

«Լրագիր (կազմիս) կարգացիք: Այս ինչ

եպիսկոպոսին, այն ինչ վարդապետին, մէկալ քահանային, միւս տիրացուն, ժամկոչին, երէցփոխանին վրայ ինչեւ գրած են, լսեցիք:

— Հա, հա. թէ որ իրաւ են նէ՝ շատ խայտառակ բաներ:

— Եղածը խայտառակ, դուրս հանուածը աւելի ալ խայտառակութիւն:

— Աղբար, այս բաներու ծայրը մը պիտի երթայ:

— Ատենով մէկ վախ մը կար՝ քահանայ մարդու անունը կոտրելէն. ամէն մարդ կ'վախնար քահանային անէծքը առնելէն:

— Հիմա այդ բանը որո՞ւ կ'հասկըցընես աղբար. հիմա ամէն մարդ ինքը իրեն քահանայ, ինքը իրեն սատանայ:

— Խեղճ չհասնիր, այս ինչ բաներ են որ կըլլան. . . Աստուած վերջերնիս բարի ընէ:

Դարձեալ խօսքը կ'ստորտի ուրիշ բանի վրայ.

«Այս անուն տղան նշանուեր է կըսեն, իրաւ է:

— Նշանտուքը եղեր է ըսին, բայց լսեցի որ ետ եղեր է:

— Ի՞նչ պատճառաւ.

— Ի՞նչ պիտի ըլլայ. տղան ստակը կանխիկ (փեշիկ) կուզէ:

— Ո՞րքան ստակ է ուզածը.

— Հազար մանէթ:

— Աղջկան հայրը խոստացեր է այդ փողը.

— Խոստացած կերեւնայ:

— Ուրեմն ինչո՞ւ չիտար.

— Ունի որ տայ խեղճը. ժամանակ ուզեր է որ տագիէն անդիէն շահով ստակ ճարէ ու վճարէ:

— Այնպէս է նէ այն խեղճ աղջկանն ալ վիզը զարնուեցաւ.

— Եւ ինչ լաւ աղջիկ է կըսեն.

— Ո՞ր գիտէ. որն ալ կըսէ թէ աղջիկը տղուն չարժեր:

— Աղբար, ատենով այսպիսի բաներ չէին ըլլար. մեր ատենը նշանի հարսնիքի ատեն՝ ստրկին խօսքն ալ չէր ըլլար, ինչ որ ուզէին այն կուտային՝ այն կ'առնէին. հիմա այս ինչ նոր բաներ են որ հնարեր են. տեսնեմք դեռ ինչ բաներ պիտի հնարեն:

— Աստուած վերջերնիս բարի ընէ:

Դարձեալ ուրիշ բանի վրայ կ'դառնայ խօսքը.

«Մեր վարժապետը տեսար:

— Զէ, ինչ կայ որ. . .

— Ի՞նչ պիտի ըլլայ, դպրատունը փակուեր է, ինքն ալ պարապ ախ ու վախ ընելով կ'բալէ:

— Դպրատունը ինչո՞ւ համար փակուեր է.

— Ստակ չկայ, անոր համար:

— Հապա հոգաբարձուները ինչ կ'ընեն,

— Ի՞նչ ընեն խեղճերը. ստակները չեն ժողովուրդ որ հաւաքեն ու վարժապետին ռոճիկ տան:

— Ուրեմն հիմա տղաքը ինչ կ'ընեն.

— Ի՞նչ պիտի ընեն. ամէն տղայ իրեն հօրը մօրը տունը գնացեր է, որը պարապ կեցած՝ սովորածները կ'մոռնայ, որն ալ ասդիս անդին քաշ գալով՝ չսովորելու բաներն ալ կ'սովորի:

— Ա՛խ ախ. այս քանի անգամ է որ այդ մեր դպրատունը կ'բացուի ու կ'փակուի. դպրատուն չեղաւ, թէ՛ատրոն:

— Այսպէսով չեմ գիտեր մեր ազգին տղաքը ինչպէս մարդ պիտի ըլլան. ուրիշ ազգեր անդադար նոր նոր դպրատուներ բանալու վրայ են, մենք մեր հիներն ալ փակելն ուրիշ մարիֆէթ չունիմք:

— Զեզի բան մը ըսեմ. իմ կարճ խեղճովս՝ մեր Հայոց ազգին քիչնը ընկեր ե:

— Աստուած վերջերնիս բարի ընէ :

Դարձեալ նոր խօսակցութիւն, դարձեալ ազգային խեղճութիւն մը, անոր վերջաբանութիւնն ալ նոյն :

Շատ աղէկ վերջաբանութիւն, շատ գովելի բաղձանք, անոր սիւ ինչ կըսէ. բայց Պարոններ, միթէ այդպէս ամէն խեղճութեան համար «Աստուած վերջերնիս բարի ընէ» ըսելը բաւական է : Միթէ պէտք չէ որ այս ալ մտածեմք թէ Աստուած վերջերնիս բարի կընէ անտարակոյս, վասն զի նորա ողորմութեանը եւ գթութեանը չափ եւ սահման չկայ. բայց այն մեր խնդրելու եւ իրեն գիտնալու բանն է : Մեր գիտնալիքը սրն է. — Միթէ պէտք չէ այնպիսի ճամբաներ բռնեմք մեր կողմանէ որ իրաւացի յոյս մը ունենամք թէ վերջերնիս բարի պիտի լինի : Եթէ մեք մէկ կողմանէ այդ խօսքը ըսեմք, եւ միւս կողմանէ դարձեալ աջուձախ չնայիմք, ինքզինքնիս ու մէկզմէկ այս փոսէն այն փոսը գլորեմք, կամ թէ աչքերնիս կամաւ փակելով՝ քարի փայտի եւ իրարու զարնուիմք, ոչ ապաքէն վերջերնիս բարի չլինելուն պատճառը մենք կ'լինիմք :

Այնպէս չէ. այլ պէտք է ջանամք՝ բարի վերջ ունենալու համար գովելի միջոցներու ձեռք զարնել, որպէս զի անով արժանի լինիմք նաեւ Աստուծոյ խնամոցն ու օգնու. թեանը. եւ ինքը գիտէ թէ ինչպէս բարի կընէ վերջերնիս իրեն սուրբ կամօքը :

Ահա քիչէն քիչ հազար տարի կայ որ մեր ազգը այսպէս իւր նպատակին յարմար միջոցներ չբռնելով՝ մինչեւ ցայսօր քանի գնացեր նուազեր, ցրուեր, աղքատցեր ու խեղճըցեր է : Ինչո՞ւ. — վասն զի բոլորովին անհոգութեան զարնելով, եւ այդ խօսքը բերնին զտրդարանք մը դարձուցած լինելով ամենեւին փոյթ չէ ըրած որ ինքը աշխատի, որպէս զի լաւ միջոցներով բարի վերջ ունենան գործերը : Կարծես թէ այն ռամկական առաձն ալ չէ հասկըցած, կամ իրեն վրայ չէ առած, որ կըսեն թէ «Ձիգ առաջ սանձէ, յետոյ Աստուծոյ յանձնէ», ուստի եւ գործերը այս աստիճանի հասեր են :

Այո, եղբարք. առաջ նայիմք որ մեր ձեռքէն գալու աղէկութիւններն ընեմք իրարու եւ ազգին, միաբան հոգւով, անխոնջ եռանդով, աննախանձ սիրով : Հասարակաց բարեոյն համար ոչ աշխատանք խնայեմք, ոչ խորհուրդ եւ ոչ ստակ. մէկզմէկ չարհամարհեմք, իրար կործանելու չնայիմք, իրարու բարի գործերը խանդարելու չաշխատիմք, եւ այնուհետեւ ալ՝ որովհետեւ յաջողութիւնը դարձեալ յԱստուծոյ է, դարձեալ տաք եւ ուղիղ սրտով ըսեմք թէ «Աստուած վերջերնիս բարի ընէ» : Այն ատենը տարակոյս չունենամք որ յիրաւի բարի կընէ Աստուած վերջերնիս : Այն ատենը կտեսնեմք նաեւ մենք որ Հայոց քիչնր չէ լմնցած եղեր, հապա յոյս կայ որ Աստուծով բարի լինի վերջերնիս :

